ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

« 01 » ապրիլի 2025թ.
ք. Եղեգնաձոր

ՀՐԱՄԱՆ N 121 -Ա

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԳԵՍԻ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 99-30.7-Ղ4-1) ՊԱՇՏՈՆԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N1554-Ն որոշմամբ հաստատված կարգի 151-րդ կետով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N441-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետի (ծածկագիր՝ 99-30.7-Ղ4-1) թափուր պաշտոն զբաղեցնելու համար հարցազրույց անցկացնող հանձնաժողովի 2025 թվականի մարտի 28-ի եզրակացությունն և Սուրեն Միրզոյանի դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սուրեն Միրզոյանին նշանակել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետի (ծածկագիր՝ 99-30.7-Ղ4-1) պաշտոնին, 12 ամիս փորձաշրջանով: Աշխատանքը սկսել 2025 թվականի ապրիլի 3-ից:
2. Սուրեն Միրզոյանին փորձաշրջանի համակարգող նշանակել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ (ծածկագիր՝ 99-31.2-Ղ4-1) Սրբուհի Դավթյանին:
3. Հաշվապահին՝ վճարումը կատարել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի դրույթներին համապատասխան:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Սուրեն Միրզոյանին ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

2025-04-01 17:54:30 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ